

## Երաժշտության առարկայական ծրագիրը Երևանի «Մխիթար Մեքաստացի» կրթահամալիրում

«Հայ երաժշտությունը ոչ միայն մեղկ ու տխուր չէ, այլ համակ ուժ է և կենդանություն, ու իր մեջ կը սնուցանե փիլիսոփայությունն իսկ, ոգին իսկ իր ցեղին, որովհետև երաժշտությունը ամենեն մաքուր հայելին է ցեղին, ամենեն հարազատն ու կենդանին անոր բոլոր արտահայտությանց մեջ - կենդանի, - որքան կենդանի է այդ ցեղը, ուժեղ, - որքան ուժեղ է իրեն ծնունդ տվող ժողովուրդը:»

Կոմիտաս

«Մխիթար Մեքաստացի» կրթահամալիրում գործում է մի ծրագիր, որի հիմքում դրված է կոմիտասագետ, կոմպոզիտոր Արթուր Շահնազարյանի «ՀՀ «Մխիթար Մեքաստացի» կրթական համալիրի Երևանի հանրակրթական դպրոցի երաժշտության ծրագիր»-ը: «...Երաժշտության խնդիրները քննելիս անպայման պետք է հիմնվենք մինչև այսօր արվածի, այսինքն՝ փորձի վրա: Ելակետ պետք է ունենալ ազգային դպրոցը, որովհետև չենք կարող արհամարհել այն, ինչը հարազատ է ժողովրդին, և չենք կարող հիմնական տեղը տալ կասկածելի նորամուծություններին: *Նորամուծություն կատարվում է, երբ յուրացվում է ավանդականը:* Սակայն ամենամեծ ու ամենացանկալի նորամուծությունը կրթության ասպարեզում այսօր այն կլինի, որ ինչ-ինչ պատճառներով իր արմատներից հեռացած *ժողովրդին վերադարձվի իր իսկ ստեղծածը:* Հայ մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս առավելագույն արդյունքներին հասել է բնության թելադրած պարզագույն միջոցներով:» Ա. Շահնազարյան

### ***Երաժշտության ուսուցման նպատակները.***

- սովորողների երաժշտական կրթում,
- նրանց մոտ երաժշտական մշակույթի ձևավորում:

### ***Երաժշտության ուսուցման խնդիրները.***

- սովորողներին ներկայացնել բարձրաճաշակ երաժշտություն, որը կնպաստի նրանց գեղագիտական ճաշակի ձևավորմանը,
- ձևավորել երաժշտություն ունկնդրելու կուլտուրա,
- երաժշտության, պարի միջոցով հաղորդակից դարձնել ազգային մշակույթին, նպաստել դրա յուրացմանը,
- երաժշտական մտածողության ձևավորում և զարգացում,
- երաժշտական լսողության, ունակությունների բացահայտում և զարգացում,
- հոգևոր զարգացում,
- ազգային, հոգևոր և դասական նյութի յուրացում,

- երաժշտարվեստի զարգացում (մանկական երգչախումբ և հարվածային պարզագույն գործիքների նվագախումբ),
- գեղարվեստական մտածողության ձևավորում և զարգացում,
- ընդհանուր զարգացման ապահովում,
- ստեղծագործական երևակայության զարգացում:

## Երաժշտության գործունեության ձևերը

### 1. Երգեցողություն

«Յուրաքանչյուր երաժշտություն իր ազգի հնչական ելևէջները կձնի և կծավալի, հայ լեզուն ունի հատուկ հնչավորությունը, ուրեմն և համապատասխան երաժշտություն:» Կոմիտաս

**Երգ** - բանաստեղծական կերպարը երաժշտության հետ միացնող երաժշտության ամենամատչելի ու տարածված ձևը

Երգեցողության նպատակն է.

- ազգային, հոգևոր և դասական նյութի յուրացում,
- ինտոնացիոն մաքուր երգեցողության մշակում,
- երաժշտական ունակությունների զարգացում,
- երգի կատարողական գրագիտության և կուլտուրայի մշակում,
- երգի կերպարային զգացողություն,
- ճիշտ շնչառություն,
- ճաշակի ձևավորում:

Երգեցողության ընթացքում օգտագործվում են.

ա. ձայնագրություն,

բ. տեսագրություն,

գ. կարաոկե,

դ. այլ կատարումներ:

Մեր ծրագիրը նախատեսում է ազգային, հոգևոր, դասական երգերի ուսուցում:

Երգացանկը կազմված է.

Կրտսեր դպրոցում

- Արթուր Շահնազարյանի «Կաքավիկ» երգարանում տեղ գտած երգերից, որոնք հիմնականում ժողովրդական են (պարերգեր, ծիսական, մանկական խաղերգեր, կատակերգեր, կենցաղային, աշխատանքային, օրորոցային)
- Կոմիտասի ժողովրդական երգերի մշակումներից
- Կոմիտասի ստեղծագործություններից
- հոգևոր երգերից

Միջին դպրոցում, բացի վերը նշվածներից, ուսուցանվում են նաև

- հայ և այլ ազգերի դասական կոմպոզիտորների (երգահանների) լավագույն երգերը:

### ***Երգի անընդմեջ ուսուցում՝ «արձագանք»***

Երգը ներկայացնելու տարբեր ձևեր կան, այն ընտրում է դասավանդողը՝ ելնելով երգի բնույթից, բովանդակությունից: Կարելի է նախօրոք գտնել բովանդակության հետ կապված հեքիաթ, բանաստեղծություն, պատմություն և այլն: Սովորողները կարող են ստեղծել իրենց պատմությունը: Աշխատանքային երգերը հնարավորություն են տալիս ցուցադրել տեսաֆիլմով, եթե հնարավոր է՝ (օրինակ՝ «Թեշիկի երգ»-ը) ցուցադրվում է աշխատանքի ընթացքը:

### ***Երգի ուսուցման օրինակ.*** «Արև, արև, եկ, եկ»

Դասավանդողը կատարում կամ ունկնդրել է տալիս ուսուցանվող երգը, բացատրում անձանոթ բառերը, արտահայտությունները: Ապա երգի ռիթմով արտասանում է.

- Ա – րև, ա – րև, եկ, եկ:

Սովորողները, ռիթմի մեջ, առանց ընդհատելու, կրկնում են: Դասավանդողը, ռիթմի մեջ, առանց ընդհատելու, երգի ռիթմով արտասանում է մյուս հատվածը.

- Զի - զի քա - ըին վեր եկ:

Սովորողները նորից, ռիթմի մեջ, առանց ընդհատելու, կրկնում են: Եվ այսպես՝ մինչև քառատողի վերջը: Ապա, առանց ընդհատելու, նույն կերպ ուսուցանվում է քառատողը՝ երաժշտության հետ: Նորից, առանց ընդհատելու, երգում են քառատողը: Այսպես, անընդմեջ, ուսուցանվում է ամբողջ երգը՝ մաս – մաս ուսուցանելով և ընթացքում իրար միացնելով: Եթե կատարման մեջ սխալ է նկատվում, չի ընդհատվում, ուղղվում է՝ ճիշտ կատարելով տվյալ հատվածը և, նորից, երգի ռիթմի մեջ, միացվում ուսուցանված նախորդ հատվածին: Ուսուցումը հնարավորինս չի ընդհատվում: Երգի ուսուցման այս եղանակը թույլ է տալիս աշխատել արագ և արդյունավետ: Երեխաները չեն հոգնում, չեն կենտրոնանում սխալի վրա, չեն ներփակվում և հիմնական ուշադրությունը բևեռում են ճիշտ կատարման վրա: Շատ կարևոր է բառերի հստակ, մաքուր, պարզ արտաբերումը երգելիս: Երգեցողությունն իրականացվում է հիմնականում ձայնավորների միջոցով: Ձայնավորները պետք է ճիշտ և մաքուր հնչեն: Ուսուցումը կարելի է իրականացնել ինչպես որևէ նվագարանի նվագակցությամբ, այնպես էլ՝ առանց դրա: Մակայն նպատակահարմար է նվագակցությամբ:

Միջին դպրոցում նույնպես կիրառվում է երգի ուսուցման այս եղանակը: Երգերի բարդությունը չի խանգարում կիրառել այս մեթոդը, քանի որ այն այս դեպքում էլ թույլ է տալիս արագ և արդյունավետ ուսուցանել երգը:

Երգը ամրապնդելու նպատակով օգտագործվում է

- ✓ երգի ձայնագրությունը,
- ✓ կարաոկեն,
- ✓ տեսահոլովակը:

Նախընտրելի է դասարանում մասնագետ դասավանդողի օգնությամբ ճիշտ, մաքուր ինտոնացիայով երգելուց հետո միայն ուսուցանված երգը կրկնել, ամրապնդել ձայնագրության, կարաոկեի, տեսահոլովակի օգնությամբ:

Կարաոկեները, տեսահոլովակները պատրաստվում են սովորողների (դասավանդողի) կողմից և տեղադրվում դպրոցի ձայնադարան բաժնում: Նույն երգի կարաոկեն, տեսահոլովակը պատրաստում են բոլորը՝ յուրաքանչյուրը տալով յուրովի մեկնաբանություն:

Ուսուցման արդյունավետ միջոցներից է ձայնագրիչով կամ թվային տեսախցիկով ուսուցանված երգի ձայնագրում-տեսագրումը սովորողների կատարմամբ: Ունկնդրելով իր կատարումը, սովորողը ստուգում է երգի կատարման ճշտությունը, մաքրությունը, ինքն իրեն գնահատում և ուղղում սխալները՝ եթե դրանք կան: Փորձը ցույց է տվել, որ իրեն լսելը հետաքրքիր է յուրաքանչյուրի համար, քանի որ ինքնագնահատումը հիմնականում կամ վստահություն կամ էլ՝ ավելիին հասնելու ձգտում է առաջացնում:

Ուսուցանելուց հետո, առաջարկվում է ծափերով կատարել երգի ռիթմիկ պատկերը: Նույնը կատարել ծնկերին հարվածելով կամ ոտքերով դոփելով: Որոշել, թե ինչ այլ ռիթմիկ պատկերով կարելի է կատարել «բնական նվագարաններ»-ից յուրաքանչյուրով, որոնք հաջորդելու են իրար: Երգը երգել «բնական նվագարաններ»-ի ուղեկցությամբ: «Բնական նվագարաններ»-ը փոխարինել հարվածային նվագարաններով (փայտեր, շրխկաններ և այլն):

Փորձել բեմականացնել՝ նվագակցելով նախընտրած նվագարաններով:

Խաղերգերը կարելի է միանգամից խաղալով ուսուցանել և բեմականացնել:

Պարերգերը ուսուցանել, ապա փորձել պարային պարզ շարժումներով կատարել: Ծիսական երգերի կատարումն ուղեկցվում է ծեսին համապատասխան ծիսական գործողությունների այն չափով, որքան այդ տարիքի երեխան կարող է ընկալել և կատարել:

Միջին դպրոցում երգի «բնական», շրխկան և հարվածային նվագարաններով նվագակցությունը հիմնականում պետք է

- ✓ աշխատանքային երգի ռիթմիկ պատկերի,
- ✓ պարերգի ռիթմի,
- ✓ ձայնային էֆեկտի,
- ✓ ծիսական երգի
- ✓ այլ դեպքերի համար

Կարելի է երգը նվագակցել ռիթմիկ պատկերով, որը ստեղծվում է միասին կամ, յուրաքանչյուրը ստեղծում է իր ռիթմիկ նվագակցությունը, որը գրի է առնվում կամ էլ՝ ոչ, և կատարվում: Առկա է ինչպես կոլեկտիվ, այնպես էլ՝ անհատական ստեղծագործական աշխատանքը: Կարող են լինել միանման և իրարից տարբերվող, բայց, իսկապես հետաքրքիր ռիթմիկ պատկերներ: Այդ ռիթմիկ պատկերները կատարվում են - առանձին

- բոլորը միասին, ընդ որում յուրաքանչյուրը կատարում է իր ստեղծածը, ստացվում է շատ հետաքրքիր ռիթմիկ բազմաձայնություն:

Սովորողները ծրագրային երգերը կարող են գտնել.

- ✓ գրադարանի երաժշտության բաժնում,
- ✓ դպրոցի կայքի ձայնադարան բաժնում,
- ✓ երաժշտության դասավանդողի ուսումնական բլոգում:

Նրանք իրենց բլոգում կարող են ունենալ առանձին ձայնադարան բաժին, որտեղ տեղ կարող են գտնել ծրագրային, ինչպես նաև ունկնդրման համար նախատեսված երգերը:

## 2. Ունկնդրում

« Մեր դպրոցներում այսօր ոչ միայն չեն սովորել երաժշտություն, այլ նույնիսկ չեն լսել երբեք երաժշտություն: Այսինքն՝ երեխան չգիտե ինչ է երաժշտությունը:

Առաջնային խնդիրը՝ արթնացնել աշակերտին, գիտակցել տալու համար, որ գոյություն ունի երաժշտություն, որ ինքը հանդիպելու է երաժշտությանը:

Ոչ թե բացատրության ժամանակ երաժշտությունը ենթարկել աշակերտի անփորձ և դեռ բավական բնությանը մոտ բնագոյային աշխարհին, այլ նրան տեղափոխել դեպի երաժշտության աշխարհ, վերածնել, և հանձնվել երաժշտությանը: Մուտ և խաբուսիկ արդյունք է տալիս, երբ երաժշտությունը բացատրում են այս աշխարհով: Երեխաները հետաքրքրությամբ լսում են, զվարճանում (թե ինչպես, օրինակ, ծիտիկների ձայների է նման այս կամ այն մասը, կամ տխուր է, ուրախ է, այսինչ դեպքն է, այնինչ պատահարն է արտահայտում, պատահարը միջոց է, և այլն), բայց դա մնում է մերկ զվարճություն – ժամանց, և ոչ կրթություն, այդպես էլ սովորողը չի լսում երաժշտություն:»

Ա. Շահնազարյան

Ունկնդրվող նյութերը ենթադրում են.

- երաժշտական, գեղագիտական ճաշակի ձևավորում,
- ազգային, հոգևոր և համաշխարհային դասական լավագույն ստեղծագործությունների իմացում լսողության միջոցով:

Ունկնդրվող նյութերն ընտրված են ազգային, հոգևոր և դասական երգերից, պարեղանակներից, հայ և այլազգի կոմպոզիտորների լավագույն դասական ստեղծագործություններից:

Ունկնդրումը հարկավոր է կազմակերպել այնպես, որ սովորողը կարողանա ոչ միայն լսել, այլև ընկալել ստեղծագործությունը: Մա, ինչ խոսք, ամենալուրջ խնդիրներից մեկն է, որը դասավանդողը պետք է լուծի: Երբ մենք փորձում ենք վերլուծել ստեղծագործությունը, ծանրաբեռնել հիշողությունը անուններով, զրկում ենք երեխային երաժշտությունն ինքնուրույն ընկալելու հնարավորությունից, խանգարում և թույլ չենք տալիս իմանալու՝ ինչ է երաժշտությունը:

Ունկնդրումը սկսվում է դեռ նախակրթարանից, որտեղ երաժշտությունը հնչում է քնի ժամին, օրվա ընթացքում երեխայի կատարած որևէ գործունեության ժամանակ: Բնարկե,

սա չի նշանակում, որ ամբողջ օրը պետք է հնչի այն: Հարկավոր է հստակ իմանալ՝ ինչ չափով և երբ մատուցել ծրագրով նախատեսված երաժշտությունը: Նախակրթարանում ունկնդրվող նյութեր կարող են լինել նաև կրտսեր դպրոցի ծրագրային երգերը: Կրտսեր, միջին և ավագ դպրոցի երաժշտական կրթությունն ստացող կամ արդեն ստացած սովորողների միջոցով կազմակերպվում են փոքրիկ համերգներ նախակրթականում: Երեխաները ոչ միայն ունկնդիրներ են, այլև գիտեն՝ ինչպես դիմավորել կատարողին, ինչու և երբ ծափահարել: Կարևոր է, որ այդպիսի համերգների ընթացքում նրանք դառնան նաև մասնակից: Դրա համար կատարվող ստեղծագործություններից որոշ գործեր երեխաների համար կարող են լինել երաժշտա-դիթմիկ վարժությունների, ինչպես նաև պարելու, ռիթմական շարժումներ կատարելու համար նյութեր: Այդպիսի համերգներ արդեն կրտսեր, միջին դպրոցներում կազմակերպում է դպրոցը՝ հրավիրելով մասնագետ երաժիշտ կատարողների, որոնք, բնականաբար տարբերվում են համերգասրահներում ներկայացվածներից: Այստեղ ունկնդիրը ինչպես ֆիզիկապես, այնպես էլ՝ երաժշտական ընկալմամբ ավելի մոտ է կատարողների հետ և այլ տպավորություն է ստանում: Իհարկե, այլ համերգասրահներում ներկայացված համերգների և երաժշտական ներկայացումների այցելությունն էլ անպայման կարևոր է և անհրաժեշտ:

Կրտսեր դպրոցում դասավանդողը և սովորողները պատրաստում են ունկնդրվող երաժշտության ուղեկցությամբ տեսահոլովակ, կայքի նյութ: Ողջունելի է ծնողների համատեղ աշխատանքը իրենց երեխաների հետ: Պատրաստված նյութերը դիտում են դասարանում, կարծիքներ փոխանակում: Տանը, դասարանում սովորողները «բնական», շրիական և հարվածային նվագարաններով կարող են նվագակցել ունկնդրվող ստեղծագործությունը: Այսպիսի ունկնդրումն անպայման խաղում է իր դերը՝ սովորողին դարձնելով ուշադիր, հետաքրքրասեր, ակտիվ ունկնդիր: Ունկնդրման նյութ յուրաքանչյուր դասարանում կարող են լինել հաջորդ տարվա ուսուցման համար նախատեսված ծրագրային երգերը: Սովորողը ծանոթանում է, երաժշտական լսողությամբ ընկալում, իսկ հաջորդ տարի՝ բավական հեշտ սովորում:

Նախակրթարանում և կրտսեր դպրոցում ստացած ընդհանուր երաժշտական կրթության միջոցով սովորողի մոտ ձևավորված որոշակի երաժշտական ճաշակը շարունակում է զարգանալ միջին դպրոցում: Միջին դպրոցում սովորողներն ավելի ինքնուրույն են, ունկնդրվող երաժշտության ուղեկցությամբ տեսահոլովակներ պատրաստելը դառնում է երաժշտության տնային պարտադիր հանձնարարություններից մեկը: Դասարանական թատերական, տիկնիկային բեմադրությունների երաժշտական ձևավորումը սովորողի երաժշտական ճաշակի լուրջ ցուցանիշ է:

### ***Մնջախաղ***

Որոշ ունկնդրվող նյութեր կարող են սովորողների կողմից ուղեկցվել մնջախաղով: Այս աշխատանքը շատ լուրջ մոտեցում է պահանջում սովորողից, քանի որ մնջախաղը

արվեստ է, այն պետք է լինի ոչ թե մակերեսային, ֆիզիկական մակարդակի վրա արված մարմնի որոշակի շարժումների համադրություն, այլ երաժշտության էությունից, խորությունից բխող միտք, որը կարտահայտվի պլաստիկ, պարային, դիմային ճիշտ ընտրված շարժումների միջոցով:

Որևէ թեմայով արված մնջախաղի համար ուղեկցող երաժշտության ընտրությունը ևս սովորողի համար բավական բարդ և լուրջ առաջադրանքներից մեկն է: Օրինակ.

***Մնջախաղ. Կրակի վրա դրված կաթսայի ջուրը եռում է:***

«Կաթսա» երեխաները կազմում են շրջան, որոնց ջուրջ շրջան են կազմում «կրակ» երեխաները: Նրանց մեջտեղում կանգնում են «ջուր» երեխաները: «Ջուր»-ը սկսում է «եռալ»: «Կրակ» երեխաները ցուցադրում են կրակի վառվելը՝ շրխկան, «բնական» և հարվածային նվագարաններով, կրակի վառվելուն բնորոշ ձայնային հնչյուններով ուղեկցելով այն: Նույնն էլ կատարում են «ջուր» երեխաները՝ ջրին բնորոշ ձայնային հնչյուններով ուղեկցելով այն:

Սովորողները կարող են դիմել կամ չդիմել մասնագետ դասավանդողին: Երաժշտության ընտրության գործում դասավանդողը խորհրդատուի դերում է: Նա ընտրության համար կարող է առաջարկել տարբեր ստեղծագործություններ, եթե դրա կարիքը կա: Խրախուսելի է սովորողի ինքնուրույնությունը և ստեղծագործական մոտեցումը:

***Ունկնդրվող նյութեր***

1. Հայկական ժողովրդական երգեր և պարեղանակներ
2. Հայկական հոգևոր երաժշտություն
3. Կոմիտաս (բոլոր ստեղծագործությունները)
4. Հայ կոմպոզիտորների լավագույն դասական գործեր
5. Համաշխարհային դասական և հոգևոր երաժշտության լավագույն նմուշներ

Օգտագործվում են.

- ձայնագրություն,
- տեսաֆիլմ,
- ուսումնական կամ այլ նյութ, որն ուղեկցվում է ունկնդրման համար նախատեսված երաժշտությամբ:

Աղբյուրները.

- համացանցից ներբեռնել տարբեր կատարումներ:

**3. Պար**

«Վստահ, ազատ, միամիտ, քնքուշ, նուրբ, վեհ, եռանդուն, լուրջ, համեստ, վայելուչ: Հայ գեղջուկ պարը կիրք զարթնեցնող շարժումներ չունի և զգացմունքներն արտահայտում է ոչ թե մեղկ, մուլի, կատաղի, հրապուրիչ և այլ շարժումներով, այլ պարերգերի միջոցով: Ազգի մը քաղաքակրթությունն է կապված իր պարին շարժումներու զարգացումը»: Կոմիտաս

«Ինչու՞ է պետք պարը սովորողին, որ նա օգտագործի՞ այն կյանքում, երբ մի տեղ պարեն, ինքն էլ կարողանա պարել: Դպրոցի նպատակն է պարը հասցնել գիտակցության, ճանաչել պարի խորհուրդը, կիրառել գիտակցաբար, կրթել միտքը, տեսնել պարի մեջ Կենաց Ծառ: Պետք չեն այնպիսի պարեր, որոնք ունեն վայրի կամ բնական շարժումներ, որոնք առնչվում են բնագոյին: Ամեն մի շարժում, ամեն մի ընթացք , որ կատարում է երեխան, պետք է իմանա, որ դա ժամանց և «տաշի – տուշի» չէ, այլ մեծ խորհուրդ կա դրա մեջ և պատմում է մի բան, որից ավելին գոյություն չունի»:Ա. Շահնազարյան

Պարը իր շարժումային համակարգով մի լեզու է, որն արտահայտում է մարդու հոգեվիճակը, հույզերն ու ապրումները՝ ուղեկցվելով երգով, երաժշտությամբ, հարվածային նվագարանների կամ ծափերի ռիթմիկ պատկերով:

Պարի դասավանդման խնդիրն է՝ ավանդական պարին բնորոշ ընդհանուր գիտելիքների, շարժումային համակարգի, զգացողության փոխանցում երեխային, ինչպես նաև ազգային պարերի տարածում: Շատ կարևոր է, որ ուսուցանվի մաքուր ավանդական պար:

Հարկավոր է իրարից տարբերել ավանդական և բեմական պարերը: Վերջինները ավանդական պարային շարժումների հիման վրա ստեղծված այն պարերն են, որոնք կարելի է կատարել՝ ունենալով նախնական պատրաստվածություն: Բացի նրանից, որ բեմական պարերը չեն կարող կրել այն կարևորը, ինչի համար ուսուցանվելու էին դպրոցահասակ մանուկներին, դրանք ոչ բոլորը կարող են պարել: Ավանդական պարերը կարող են պարել բոլորը, դրանք բնական շարժումներից են կազմված, մատչելի են, հասկանալի: Պետք չէ ստեղծել կեղծ պար և մատուցել որպես ազգային: Եթե սովորողը գիտի պարի լեզուն, ինքը կկարողանա պարել անձանոթ պարը, ծանոթ պարը կզարգացնի, կգտնի նոր լուծումներ այն զարգացնելու համար: Իսկ եթե սովորել է բեմական պար, ուրեմն, ինչ էլ ստեղծի, կլինի կեղծ, հեռու բնական մաքուր ազգայինից: Երգացանկում տեղ գտած պարերգերը կատարվում են պարի ուղեկցությամբ:

Օգտագործվում է

- պարեղանակ՝ ձայնագրված
- պար՝ տեսագրված
- ուսումնական տեսագրված նյութ
- պարի ուսուցման տեսագրված նյութ

#### **4. Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում**

Հանրակրթական դպրոցում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթներ, ծեսեր, տոներ: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները կզարգանային, կփոխվեին հասարակական փոփոխությունների հետ համաքայլ: Դրանք չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու:



21–րդ դարի սկզբին հայտնվել ենք մի տխուր փաստի առջև. մենք կորցրել ենք ազգային շատ կարևոր արժեքներ և փորձում ենք վերականգնել կորցրածը: Այս գործը պետք է սկսել վաղ հասակից, այսինքն՝ ծնված օրվանից: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում, հասարակության մեջ չի պահպանվել ավանդականը:

Կրթահամալիրի զարգացման ծրագրի պահանջ է (հղում կարող եք անել)

Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան: Ո՞ր գործողություններն են, որ կարելի է կատարել կամ փոքր-ինչ ձևափոխել կամ լրացնել նորով: Ո՞ր պարագաներն են, որոնք շատ լավ կմտնեն ժամանակակից ծեսի մեջ կամ կստանան նոր ձև կամ էլ նորերը կլինեն: Սրանք այն հարցերն են, որոնք առաջ են գալիս և որոնք լուծելու խնդիր ունենք:

Իհարկե, ծեսին նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքան հեռանալ, որ այն դառնա ոչ թե ծես, այլ անհատ մարդկանց երևակայությամբ ստեղծված հիբրիտ՝ հնի ու նորի վատ սինթեզ: Ծիսական հիմնական կարգը պետք չէ շփոթել տոնական մասի հետ: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի, ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր:

Մեր Ծրագրի նպատակն է ծեսը, տոնը սովորողինը դարձնել, որ սովորողը իրեն մասնակից ու փոխանցող զգա:

Խնդրի իրագործման համար մենք առաջարկում ենք.

- Ծանոթանալ ազգային ծեսերին ու տոներին
- Ծեսը վերականգնել, նրան նոր կյանք տալ:

Ծեսերը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո՝ որոշում ենք, թե ինչ ճանապարհ են անցնելու սովորողները՝ ծիսակատարությանը նախապատրաստվելիս.

1. Ծանոթանում են ծեսի հետ
2. Հավաքում են տեղեկություններ տարբեր աղբյուրներից՝ մեծերից, ինտերնետից, գրքերից և այլն
3. Գրի են առնում
  - ա. խաղիկներ,
  - բ. առած – ասացվածքներ,
  - գ. հանելուկներ,
  - դ. հեքիաթներ, պատմություններ, ավանդություններ,
  - ե. երգեր:
4. նկարում են՝ ա. ծիսական հերոսներին, բ. ծիսական պատկերներ,
5. սովորում են ծիսական և ծեսին համապատասխան երգեր, ասույթներ, ասիկներ, օրհնանքներ,
6. սովորում են ավանդական պարեր,
7. պատրաստում են ծիսական պարագաներ,

8. խաղարկում են ծիսական գործողություններ, ծիսական խաղեր,
9. բեմականացնում են երգեր,
10. կատարում են բնագիտական փորձեր,
11. գնում են ուսումնական ճամփորդության,
12. հորինում են հանելուկներ, հեքիաթներ, գովք, օրհնանք,
13. կազմում են մաթեմատիկական խնդիրներ,
14. գրում են նամակներ, բարեմաղթանքներ, վերապատում, փոխադրում են իրենց տպավորությունները:

Մովորողը, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում է ծեսը:  
Ի՞նչ խնդիրներ են լուծվում.

- Նյութի յուրացում (լեզուն, մտածողության գեղարվեստական այլ արտահայտչամիջոցներ)
- Գիտելիքների, կարողությունների, դրսևորում և կիրառում
- Գեղարվեստական խոսքի մշակում
- Տարբեր կարողությունների դրսևորում, հղկում, մի շարք հմտությունների ձեռքբերում, մշակում (լեզվական, թատերական)
- Գրական - գեղարվեստական ճաշակի զարգացում
- Ինքնադրսևորում, ձերբագատում բարդույթներից

Այս աշխատանքները նպաստում են.

- երեխայի բառապաշարի հարստացմանը,
- մտածողության ձևավորմանը,
- ստեղծագործական երևակայության զարգացմանը,
- ինքնուրույն աշխատելու ունակություն են ձևավորում,
- բավարարվում է նրա ինքնահաստատման – ինքնադրսևորման պահանջը,
- ձեռք է բերվում խմբով աշխատելու, ինքնակազմակերպման հմտություններ,
- զարգանում է գեղարվեստական ճաշակը (նկարչություն, ձեռարվեստ, երաժշտություն և այլն),
- ուսումնական մի շարք խնդիրներ են լուծում,
- հնարավորություն են տալիս գնահատելու և յուրացնելու ազգային արժեքները,
- ավելի մոտիկից ճանաչելու իրենց ուսուցիչներին, տատիկներին, պապիկներին, ծնողներին, հարազատներին:

### Մովորողը կիմանա

- ✓ ազգային ծեսերը

- ✓ ազգային սովորույթները
- ✓ ազգային ավանդական պարերը
- ✓ հայկական ժողովրդական և ծիսական երգերը
- ✓ ծիսական կերպարները
- ✓ ժողովրդական, մանկական, ծիսական խաղերը
- ✓ ծիսական կերակրատեսակները
- ✓ ծիսական պարագաները

### **Սովորողը կկարողանա**

- ✓ պարել ազգային ավանդական պարեր
- ✓ երգել հայկական ժողովրդական և ծիսական երգեր
- ✓ պատրաստել ծիսական պարագաներ
- ✓ խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր
- ✓ պատրաստել ազգային ծիսական կերակրատեսակներ
- ✓ համացանցից, այլ աղբյուրներից ծեսին վերաբերվող նյութեր գտնել

### **Սովորողը կլինի**

- ✓ Ծեսը իմացող ակտիվ մասնակից, փոխանցող, տարածող:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ սովորողները ծեսի նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:

### ***Միջառարկայական կապը ծեսի նախապատրաստական շրջանում և իրագործելիս***

***Երաժշտություն*** – գիտեն և կարողանում են կատարել ծիսական և այլ հայկական ժողովրդական երգեր:

***Պար*** - գիտեն և կարողանում են կատարել ծիսական և այլ հայկական ավանդական պարեր:

***Մայրենի*** - գիտեն ծեսը, ծիսական ավանդություններ և գրույցներ, ասույթներ, առած-ասացվածքներ, բանաստեղծություններ, կարողանում են խաղարկել ծիսական գործողություններ, կարողանում են պատմել իրենց կատարածը, գեղարվեստորեն ներկայացնել, ինքնուրույն խաղարկել ստեղծագործական մոտեցում պահանջող ծիսական գործողություններ (օրինակ՝ Բարեկենդանի ծեսին):

***Մարմնակրթություն*** - գիտեն և կարողանում են խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր

***Բնագիտություն*** - կարողանում են պատրաստել ծիսական բուսական պարագաներ (օրինակ՝ զատկական ածիկ), գիտեն այն բույսերը, որոնք օգտագործվում են ծեսերին և ունեն դրանց մասին, այդ տարիքին համապատասխան, գիտելիքներ:

**Ձեռարվեստ, կերպարվեստ** - պատրաստել ծիսական պարագաներ, այդ թվում՝ հանդերձանք, կատարել նյութի ընտրություն

**Խոհանոց** - պատրաստել ազգային ծիսական և այլ կերակրատեսակներ

Մաթեմատիկա - կարողանում են հաշվել կերակրի համար նախատեսված մթերքը, պարագաներ պատրաստելու համար՝ չափել նյութը, հաշվել գնումները (մետր, սանտիմետր և այլն, կիլոգրամ, գրամ և այլն, դրամ)

## 5. Երաժշտա – տեսական գիտելիքներ

Երաժշտա - տեսական գիտելիքները հարկավոր է մատուցել այն տեսքով, որը հեշտ ու հասկանալի կընկալվի տվյալ տարիքի երեխայի, սովորողի կողմից: Հենց սկզբից պետք չէ երեխային, սովորողին ծանրաբեռնել տերմիններով ու անուններով, որոնք ոչ միայն խճճում են նրա հիշողությունը, այլև վանում դրանք իմանալու ցանկությունը: Եթե նա կարողանում է կատարել, հեշտ է լինում հետագայում ուսուցանել դրանց անվանումները: Օրինակ, եթե նա կատարում է «մեծի» (քառորդ տևողության նոտա) և «փոքրի» (ութերորդական տևողության նոտա) «քայլերը», ապա հետագայում հանգիստ կիմանա և կհիշի դրանց երաժշտական անվանումը: Իսկ եթե գիտի, որ տվյալ նշանը քառորդ կամ ութերորդական տևողությունն է, բայց դժվարանում է կատարել, այս դեպքում անհասկանալի է դառնում՝ ինչ է անելու իր գիտելիքի հետ: Այս սկզբունքով էլ կազմված է երաժշտա - տեսական գիտելիքների ուսուցումը:

Դրանք հարկավոր է մատուցել նախ՝ խաղի միջոցով, գործնական կատարմամբ, սկզբից ուշադրությունը բևեռելով, ապա՝ որոշակի, հստակ պարզելով սովորողի համար դրանց երաժշտական նշանակությունը, անվանումը, գրի առնելու ձևը և այլն:

### ***Տարրական երաժշտա - տեսական գիտելիքների ուսուցման օրինակներ***

#### ***➤ Հնչյունի հատկությունները***

• **Տևողություն**. ուսուցումը թույլ կտա կատարել ուսուցանված երգերի և ունկնդրվող նյութերի տարբեր ռիթմական պատկերներով նվագակցում (հարվածային, շրխկան և «բնական» նվագարաններով):

Իր գոյության որոշակի շրջանում մարդն անհրաժեշտություն է ունեցել գրի առնել իր կամ ուրիշի ստեղծած երաժշտական ստեղծագործությունը: Տարբեր դարերում տարբեր ազգեր գրության իրենց ձևն են ստեղծել: Հայաստանում եղել է խազագրություն, որի գաղտնիքը դարերի ընթացքում կորել է և Կոմիտասի շնորհիվ՝ վերականգնվել: Սակայն, աշխարհն ընդունեց մեկ միասնական նշանների համակարգ, որն օգտագործում են մինչ այժմ: Ո՞րն էր այն սկզբունքը, որով առաջնորդվելով՝ մարդիկ կարողացան ստեղծել այն և, որն իրեն դարերի ընթացքում արդարացրեց և հաստատվեց: Ինչ խոսք, իմանալ՝ ինչպես կարելի է գրի առնել երաժշտական հնչյունը, հետաքրքիր է: Բայց, միայն հետաքրքրասիրությունը բավարարելու համար իմաստ ունի՝ սովորել այդ ամենը:



Հանրակրթական դպրոցում սովորում են տարբեր երաժշտական ունակությամբ սովորողներ՝ բավական թույլից մինչև շատ լավ, երբեմն՝ փայլուն: Յուրաքանչյուրը երգը


կատարում է իր ունակությունների չափով: Ռիթմի զգացողությունը, ի տարբերություն հնչյունի կոնկրետ բարձրությունն ընկալելու հատկությունից, կա հիմնականում բոլորի մոտ: Երաժշտա-տեսական գիտելիքների տարրական նոտագրագիտության հնչյունի հատկություններ բաժնում հնչյունի միաժամանակ կատարվում է տևողությունը և գրի առնվում: Ունկնդրման և երգի ուսուցման բաժնում նշվում է, որ սովորողները կատարում են

- ռիթմիկ նվագակցություն կատարվող երգերին,
- ունկնդրվող նյութին:

Նոտայի տևողությունը գրի առնելը թույլ կտա ոչ միայն կատարել դրանք, այլև ռիթմիզացնել սովորած երգերը, որոշել նոր ուսուցանվող երգի կամ անձանոթ երգի ռիթմիկ կառույցը և գրի առնել՝ ըստ տևողության:

**«Մեծի» և «երեխայի» քայլ - քառորդ և ութերորդ տևողություն**


Սեղանին դրված է 4 կարմիր խորանարդ: Դասավանդողը ձեռքը դնում է առաջին խորանարդին և, դեմքի միմիկայով ու գործողությունը կատարելով, հասկացնում, որ փչեն: Նա ձեռքը դնում է նախ առաջին խորանարդին, ապա հերթով, հավասար տեմպով, մյուսներին: Ցույց տալով բոլոր չորս խորանարդները, նա, նույն ռիթմի մեջ, վերադառնում է դեպի առաջինը (ռեպրիզա): Այս անգամ հրահանգ է տալիս՝ «ծափ», որի կատարումից հետո՝ հարված ծնկներին, ապա՝ դոփել ոտքերով: Ոտքի դոփելը կատարել մի քանի անգամ, ասելով, որ այսպես քայլում է հայրը: Մի պահ դադարեցնելով, հարցնել. «Իսկ ինչպես է քայլում երկու կամ երեք տարեկան երեխան»: Երեխաները ցուցադրում են: Դասավանդողը սեղանին է դնում կապույտ խորանարդները և կատարում նույնը, ինչ՝ կարմիրներով: Ապա երեխաներից մեկին առաջարկում է կատարել փոքր երեխայի դերը և քայլել իր կողքով: Կատարելով առաջարկը, հայտնաբերվում է, որ մեկ մեծի քայլին համընկնում է փոքրի երկու քայլ: Բնականաբար, մեկ կապույտ խորանարդին համապատասխանում է մեկ, իսկ երկուսին՝ երկու քայլ, երկու կարճ շունչ, երկու ծափ, երկու հարված ծնկին, երկու ոտքի դոփյուն: Դասավանդողը փորձում է տարբեր հաջորդականությամբ դասավորել կապույտ և կարմիր խորանարդները, որոնք, ըստ հրահանգի, կատարվում են մեկ՝ ծափով, մեկ՝ դոփյունով և այլն: Դասավանդողը գրատախտակին գրում է մեծի քայլի նշանը՝ , ապա փոքրիկը՝ : Գծում է երկու զուգահեռ հորիզոնական գծեր և պատկերում նրանց քայլերը (ճանապարհը).



Որպեսզի հեշտացվի արտահայտվելու ձևը, մեծի քայլին տալիս են «տա» անվանումը, իսկ փոքրի քայլին՝ «տի»: Գրատախտակին գրված մեծի երկու քայլերը, փոխարինելով երկու կարմիր խորանարդով, դրվում է սեղանին: Դասավանդողի հրահանգով երեխաներն ասում են՝ «տա-տա»(դասավանդողը ձեռքը խորանարդից խորանարդ տեղափոխում է քառորդ տևողության չափով) և հետո 2ծափ են տալիս համապատասխան տևողությամբ: Մի կողմ է տարվում կարմիրը և դրվում է 4 կապույտ խորանարդ: Դասավանդողի հրահանգով

երեխաներն ասում են՝ «տի-տի-տի-տի», և, նորից, առանց ընդմիջելու, համապատասխան տևողությամբ 4 ծափ տալիս: Մի կողմ է դրվում 2 կապույտը և փոխարինվում 1 կարմիր խորանարդով: Նույն կերպ ասում և ծափ են տալիս: Ասելիս ծափ չեն տալիս և, հակառակը: Այսպես բարդացնելով, երեխաները պրակտիկ կատարում են քառորդ և ութերորդ տևողության նոտաները: Դասավանդողին փոխարինում են երեխաները: Ուսուցման այս ձևը թույլ է տալիս առանց դժվարության կատարել բավական բարդ ռիթմիկ պատկերներ (աշխատանքային տետր):

Աշխատանքային տետրի էջերից մեկի օրինակ.



Աշխատանքային տետր. Լինում է թղթային և էլեկտրոնային տարբերակով:

Կատարել համապատասխան օրինակները:

Նկարել քառակուսիներ և ներկել կարմիր և կապույտ գույներով:

Նկարել կլոր գնդիկներ (մատիտը դնել թղթին և, շրջանաձև պտտելով, ստանալ որոշակի մեծության գնդիկ):

Նկարել կլոր գնդիկ, ապա, մատիտը գնդիկից չկտրելով, դեպի վեր գծել ուղիղ գիծ:

Նկարել կարմիր քառակուսի, իսկ կողքին՝ քառորդ տևողության նշանը:

Նկարել երկու կապույտ քառակուսի, իսկ կողքին՝ երկու ութերորդ տևողության նշան, որոնք իրար են միացված գծով:

• Դասարանը բաժանվում է երկու խմբի: Առաջին խումբը ծափ է տալիս «մեծի», իսկ երկրորդ խումբը՝ «փոքրի» քայլերը: Ապա կատարում են հակառակը:

✓ «Թիթեռ»

5 սմ տրամագծով կտրել չորս թիթե շրջան: Երկուսը սոսնձել իրար՝ նախօրոք մեջտեղում դնելով թել, որից պետք է կախվի: Մյուս երկուսի մեջտեղից բարակ շերտով սոսնձել և կպցնել թելով իրար կպած շրջանների երկու կողմից մեջտեղի մասում: Չսոսնձված մասերը երկու կողմից մի փոքր առաջ բերել այնպես, որ նմանվի գնդի: Այն հանգիստ թիթեռի նման պտտվում է, երբ փչում են:

Երեխաները կանգնում են շրջանաձև կամ ուղիղ գծով:

Դասավանդողը յուրաքանչյուրին առաջարկում է փչել «թիթեռնիկի» վրա այնպես, որ նա թռնի իրենից, որքան հնարավոր է, հեռու:

Դասավանդողը «թիթեռն» անցկացնում է երեխաների դեմքի մոտով՝ առանց կանգ առնելու:

Յուրաքանչյուրը փչում է այնպես, որ «թիթեռը» չհասցնի մոտենալ իր դեմքին:

Դասավանդողն առաջարկում է, որ յուրաքանչյուրը փչի, որքան հնարավոր է, երկար (շունչ առնել, նորից փչել) այնքան, որ «թիթեռն» անընդհատ հեռու մնա:

Դասավանդողը «թիթեռը» պահում է երեխաների դեմքին մոտ: Յուրաքանչյուրը կարճ, արագ-արագ արտաշնչելով, թույլ չի տալիս, որ «թիթեռը» մոտ գա իր դեմքին:

Նույնը կատարում են մոմով՝ սովորելով կատարել կարճ և երկար արտաշնչում:

Դասավանդողը յուրաքանչյուրին առաջարկում է փչել այնպես, որ վառվող մոմի կրակը մարի:

Փչել այնպես, որ կրակը չմարի:

Կատարել հետևությունն՝ ինչպիսի արտաշնչում է կատարվում երկու դեպքում:

Կարմիր խորանարդով նշել երկար, իսկ կապույտով՝ կարճ շունչը: Դասավանդողը սեղանին է դնում երկու կարմիր և երկու կապույտ խորանարդ և առաջարկում փչել համապատասխան շնչով: Ապա սկսում է տեղափոխել խորանարդները: Երեխաները կատարում են ըստ տեղափոխված հաղորդականության: Տեղափոխությունը կատարվում է անընդմեջ:

Դասավանդողը երեխաներին առաջարկում է փոխարինել իրեն: Հետևել, որ կատարեն անընդմեջ:

*Այս վարժությունները օգնում են նաև մշակել շնչառությունը:*

### **Դինամիկայի նշաններ.**

✓ «Քուն»

Նստել աթոռին ուղիղ դիրքով, ձեռքերը՝ ծնկներին: Արտասանելով տեքստի առաջին տողը, թեքվել առաջ՝ ձեռքերը ծնկների վրայից սահեցնելով մինչև ոտքերի ծայրը: Մի փոքր դադարից

հետո, արտասանելով երկրորդ տողը, կատարել նույն գործողությունը՝ այս անգամ ոտքերի ծայրից վերադառնալով դեպի ծնկներ:

Մենք փակում ենք աչիկները՝ քուն մտանք:

f p  
f (քառորդ ֆերմատա)

Տի-տի-տի-տի-տի-տի-տի-տի, տա, տա, տա: (քառորդ ֆերմատա)

Մենք բացում ենք աչիկները՝ արթնացանք:

p f  
p

Տի-տի-տի-տի-տի-տի-տի-տի, տա, տա, տա:

Առաջին տող - արտասանությունն սկսվում է մի փոքր ուժեղ ձայնով, հետո հետեւեալ ձայնի ուժը թուլանում է, իսկ վերջում լսվում է համարյա շշուկով:

Երկրորդ տող - արտասանությունն սկսվում է համարյա շշուկով, հետո հետեւեալ ձայնն ուժեղանում է, իսկ վերջում լսվում է բավական ուժեղ:

Գործողությունները շարունակվում են մնջախաղով - «Արթնանալուց» հետո գնում են «լվացվելու», ձեռքերը «չորացնում են ցամքոցով», ատամները «լվանում ատամի խոզանակով», «վերցնում պայուսակը» և ռիթմիկ քայլերով «ուղևորվում դպրոց»:

Մնջախաղը կատարվում է համապատասխան երաժշտության ուղեկցությամբ, որը կատարում է երաժիշտ դասավանդողը կամ՝ այլ կատարում:

### ✓ P, f, crescendo, diminuendo (decrescendo)

• Դասավանդողը երեխաներին առաջարկում է ծափահարել: Ձեռքերի շարժումով ցույց է տալիս, որ ծափահարեն մեղմ: Հետո հետեւ, ձեռքերը բարձրացնելով վեր և ավերը բացելով, ցույց է տալիս, որ ծափերը ուժեղացնեն: Այսպես, փոխելով ձեռքերի դիրքը և դեմքի արտահայտությունը, նա մեկ՝ ուժեղացնում, մեկ՝ մեղմացնում է ծափերը: Այսպես, երեխաները կատարում են՝ ուժեղ՝ f, մեղմ՝ p, crescendo, diminuendo, միևնույն ժամանակ ծանոթանում խմբավարի շարժումներին: Նույնը կատարում են ոտքերի դոփյունով:

• Երեխաներին առաջարկել նույնը կատարել ձայնավորներով: Նախ, որոշում են, թե որ ձայնավորը ձեռքերի պայմանական ինչ ժեստով է ցույց տրվելու.

ա~ - ձեռքերը կրծքից քիչ հեռու, ավերը նայում են դիմաց

ո~ւ - ավերը դեպի ներքև

ի~ - ավերը «նայում» են իրար՝ մատները վերև

օ~ - բութ մատը միանում է ցուցամատին՝ դառնալով օղակաձև, մյուս մատները վերև են պարզած

մ~ - միջնամատը, ցուցամատն ու բութ մատը մոտեցրած են իրար (ձայնը արտաբերվում է փակ բերանով)



Է~ - բույժ մատը ցուցամատի հետ ցույց է տալիս ուղիղ անկյուն, մյուս մատները ծավլած են: Ինչպես ծավերի և դոփյունի դեպքում, այստեղ էլ՝ մեղմը, ուժեղը, crescendo-ն, diminuendo-ն, ձեռքերը, ձայնավորի համապատասխան ժեստով, կատարում են նույն շարժումները: Կարելի է փորձել կատարել բազմաձայն: Դասարանը բաժանվում է երկու խմբի: Մի խումբը հետևում է աջ, իսկ մյուսը՝ ձախ ձեռքին: Դասավանդողը յուրաքանչյուր ձեռքով ցույց է տալիս տարբեր ձայնավորներ, որոնք կատարվում են տարբեր ուժգնությամբ (մեղմ, ուժեղ, մեղմից ուժեղ, ուժեղից մեղմ):


Այս խաղային վարժությունները հիմք են դնում նաև բազմաձայն կատարմանը:

### ***Արտասանական կանոն***

Միասին արտասանում են Ա. Խնկոյանի «Մեղու» բանաստեղծությունը:

Պըզզան, պըզզան, պըզպըզան,  
Պստիկ մեղու տըզտըզան,  
Դաշտ ու հովիտ կշրջես,  
Բարձր սարեր կթռչես,  
Սուսան, սմբուլ կըծծես  
Ու ոտքերով թավամազ  
Փոշի առած՝ տուն կգաս:

Լավ յուրացնելուց հետո, արտասանել ռիթմիզացված, ապա կանոնի նման: Մի խումբը սկսում է, երկրորդ խումբը միանում է երկրորդ տողից՝ սկսելով սկզբից: Եթե կարող են, կարելի է նաև եռաձայն: Փորձել հորինել երկու կամ երեք հնչյունով երաժշտություն և նույնը կատարել

երգելով: Կարելի է ամեն տողի վերջում ավելացնել «պըզզ, պըզպըզան»   
բառակապակցությունը:

### ***Բարձր, միջին և ցածր ձայն***

Երեխաներն ընտրում են որևէ բանաստեղծություն և արտասանում: Դասավանդողն առաջարկում է նույնը կատարել փոքրիկի, մայրիկի, ապա հայրիկի ձայնին նմանեցնելով:

Պարզում են, որ փոքրիկը խոսում է «բարակ»՝ բարձր ձայնով, մայրիկը՝ միջին, իսկ հայրիկը՝ ցածր ձայնով: Փորձում են ձեռքով ցույց տալ.

- ցածր ձայնը (ձեռքը իջած է, ափը նայում է գետնին),
- միջինը (ձեռքը գոտկատեղի մակարդակին է, ափը նայում է գետնին),
- բարձրը (ձեռքը կրծքի մոտ է, ափը նայում է գետնին):

Հերթով արտասանում են բանաստեղծությունը՝ ամեն անգամ փոխելով ձայնի հնչերանգը և ձեռքով ցույց տալով համապատասխան ժեստը: Դասավանդողը մի փոքր բարդացնում է, ցույց է տալիս խառը, մեկ՝ փոքրի, մեկ՝ հայրիկի, մեկ՝ մայրիկի համապատասխան ձեռքի շարժում:

Երեխաներն, արագ կողմնորոշվելով, կատարում են ձայնի համապատասխան ինտոնացիայով: Դասավանդողը ձեռքը ներքևից դանդաղ վերև է բարձրացնում, իսկ երեխաները սահուն, կատարելով գլխասնդո, անցնում են մի ձայնից մյուսը:

Այս սկզբունքով են տարվում երաժշտա - տեսական գիտելիքների ուսուցման աշխատանքները կրտսեր դպրոցում:

Միջին դպրոցում արդեն ուսուցանվում են համապատասխան երաժշտական անվանումները, բերվում են օրինակներ երաժշտական ստեղծագործություններից: Կարևոր է, որ սովորողներն իրենք գտնեն, հայտնաբերեն, ստեղծագործեն, իսկ դասավանդողը հիմնականում ուղորդի:

Օգտագործվում են.

- Նոթբուկ, նեթբուկ, համակարգիչ
- Smart-Notebooke ծրագիրը
- էլեկտրոնային գրատախտակ
- հարվածային և «բնական» նվագարաններ
- էլեկտրոնային աշխատանքային տետր
- տեսանյութ

## 6. Ռիթմիկ և երաժշտա-ռիթմիկ վարժություններ

Ռիթմիկ և երաժշտա-ռիթմիկ վարժությունների նպատակը սովորողների երաժշտական ունակությունների, ռիթմի զգացողության զարգացումն է, հնչյունի տևողության ճիշտ կատարումը:

